ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2021թվականի N 27-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈԼՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ԵՎ ԱՄԵՆԱՓՈՔՐ ԲՆԱԿՉՈՒՀԻՆԵՐԻՆ ՄԱՐՏԻ 8-Ի ՈՒ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,46-րդ հոդվածի 2-րդ կետով ,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն և Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. հունվարի 22-ի <<Թումանյան համայնքի 2021թ. բյուջեի եռամսյակային համամասնությունները սահմանելու մասին>> թիվ 5 -Ա որոշումները՝
որոշում եմ.

1.Թումանյանի համայնքապետարանի բյուջեի կառավարման ապարատի <<Հատուկ նպատակային այլ նյութեր ծախսերից>>/հոդված 4269/ հատկացնել 80000 (ութանասուն հազար) ՀՀ դրամ՝ Մարտի 8-ի ու կանանց միամսյակի կապակցությամբ Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերի ամենատարեց և ամենափոքր բնակչուհիներին նվիրատվություն կատարելու համար՝համաձայն 01.02.2021թ. թիվ 19 պայմանագրի:
2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝
Ե. Շաքարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Ղ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. մարտի 18
ք.Թումանյան